ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ 28.12.2013թ ՆԻՍՏՈՒՄ

ՏՆՕՐԵՆ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԵՊՀ ԻՄ-Ի ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն փաստաթղթով սահմանվում է ԵՊՀ ԻՄ-ի **ֆինանսական քաղաքականությունը ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման գործընթացների** համար, այդ գործընթացների ֆինանսավորման մեխանիզմները, ֆինանսական հարաբերությունների կարգավորումը մասնակից կողմերի միջև (ԵՊՀ ԻՄ-ի տնօրենություն, ԵՊՀ ԻՄ-ի որակի ապահովման ստորաբաժանում, ԵՊՀ ԻՄ-ի որակի կառավարման հանձնաժողով, աշխատանքային խմբեր, աշխատակիցներ, գործընկերներ և այլն): Այն հիմնված է ԵՊՀ ՊՈԱԿ ԻՄ-ի կանոնադրության 35 կետի և Ռազմավարական ծրագիրի VIII[ա] խնդրի պահանջների վրա և ֆինանսական շահ չի հետապնդում: ԵՊՀ ԻՄ-ի ֆինանսական քաղաքականության իրականացման համար պատասխանատու է մասնաճյուղի տնօրենը:

Ֆինանսական քաղաքականության նպատակներն են.

- ✓ Ֆինանսապես ապահովել ԵՊՀ ԻՄ-Ի որակի ներքին ապահովման գործընթացներն իրականացնող ստորաբաժանման գործունեությունը:
- ✓ Նպաստել մասնաճյուղի ֆինանսների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը:

- ✓ Ներդնել և մշտապես բարելավել ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման գործընթացներն իրականացնող ստորաբաժանման և տարբեր հանձնախմբերի գործունեության առանձնահատկություններին համարժեք ֆինանսական ապահովման մեխանիզմներ:

Ֆինանսական քաղաքականության հիմնական խնդիրներն են.

- ✓ Հաշվարկել որակի ներքին ապահովման գործընթացներին անհրաժեշտ ֆինանսական միջոցները և ապահովել հոսքը:
- ✓ Իրականացնել նախատեսված ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը:
- ✓ Կարգավորել որակի ներքին ապահովման գործընթացների մասնակիցների ֆինանսական հարաբերությունները:

Որակի ներքի ապահովման գործընթացների ֆինանսական ապահովման մեխանիզմներն են.

- ✓ Որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրում է ԵՊՀ ԻՄ-ն արտաբյուջետային միջոցներից (ԵՊՀ ՊՈԱԿ ԻՄ-ի կանոնադրություն, կետ 35):
- ✓ Մասնաճյուղի տարեկան բյուջեում որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման ծախսերի համար առանձնացված է հատուկ տող:
- ✓ Գործընթացներին անհրաժեշտ ֆինանսական նախահաշիվը, ԵՊՀ ԻՄ որակի կառավարման հանձնաժողովում քննարկվելուց հետո, ստորաբաժանման ղեկավարը ներկայացնում մասնաճյուղի տնօրենին՝ բյուջեի նախագծում ներառելու համար:
- ✓ Չնախատեսված ծախսերի առկայության դեպքում (վերապատրաստումներ, խորհրդատվություն, հրատարակություններ, կլոր-սեղաններ, այցելություններ, գործուղումներ և այլն) ԵՊՀ ԻՄ որակի ապահովման ստորաբաժանման ղեկավարը գրավոր դիմում է մասնաճյուղի տնօրենին:

- ✓ Որակի ներքին ապահովման գործընթացներում այլ մասնակիցներ ընդգրկելու դեպքում մասնաճյուղը վերջիններիս հետ կնքում է վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր, որի ձևանմուշը մշակում է ԵՊՀ ԻՄ-ի իրավաբանը:
- ✓ Ֆինանսական միջոցների ծախսերի և քաղաքականության իրականացման վերաբերյալ որակի ապահովման ստորաբաժանման ղեկավարը հաշվետվություն է տալիս Որակի կառավարման հանձնաժողովին, որը ներառվում է նաև տնօրենի տարեկան հաշվետվության մեջ և հրապարակվում ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական էլեկտրոնային կայքում: